

86/9

Nihkuern-

hGym tef uigeeen ne5
n-ueg Gue4 gnepsinGhy

329. 14

P - 55

Ch8

2010

Ան. Հրանդի. Արքայաց
Տօրագիր

ՀՀ Հրանտարակ. ԵՐԻՑԱՌԱՐԴ ԳԱԶՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ 3

8628

ԹՎԱՅՐԴ

ԲԵՂՈՒ ԵՆՔ ԱՆՁԵՑԻՈՒՄ

ԳԱՂԱՎԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

5 ԿՈԴ

329.14

R - 55

ԸՆԼՈՒՐԴ

ԽՆՁՈՒ ԵՆՔ ԱՆՁԱՑԻՈՒՄ

ԳԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

35667

ԳԱՅՆ Ե 5 ԿՈՂ.

8628

2001

ԻՆՉՈՒ ԵՆՔ ԱՆՁԱՏԻՌՈՒՄ

ԴԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

(Բաց համակ մի զաւառացի ընկերոջ)

Սիրելի ընկեր!

«Դուն էլ Բրուտոս!»

«Դու, որ այնքան սիրում էիր Մայր Դաշնակցութիւնը, դու որ այնքան գնահատում էիր մեր կուսակցութեան մէջ ամբարւած քաջութիւնը և տեմպերամենարը, դու որ եռանդուն կողմանկից ես յեղափոխական կենդանի գործի և ատում ես թէօրիխական խծրծանքները և պառակտումները, դուն էլ անցար երիտասարդ գաշնակցակաների շարքը»:

«Ի՞նչի համար»:

«Ինքնապաշտպանութեան շնորհիւ առաջացած շը-
փոթն է արգեօք քեզ զգւեցնում, թերևս դժգոհ ես այն
գործելակերպից, որ Դաշնակցութիւնը ունեցել է մինչեւ
այժմ Տաճկահայաստանում: Գուցէ չես հաւանում Դաշ-
նակցութեան թէօրիխական ծրագիրը, կամ մեր կազմա-
կերպչական սիստեմը: Բայց այդ ամենը չէ որ շտկելու
բաներ են»:

«Եթէ ոչ, այն ժամանակ ասա ինդիմ որն է
սօցիալիստական այն նոր ուսումը, այն նոր դաւանան-
քը, որը գուք ունէք և որից զուրկ ենք մենք: Որոնք

93084-142



35667

Էն այն լուրջ—իրական և ոչ ինտելիգենտացին շաղակատ ուղեղից բղխող—հմունքները, որոնք ստիպում են ձեզ անջատել Դաշնակցութիւնից և վերջապէս ինչպէս էք կամենում տեխնիապէս իրագործել այդ անջատումը առանց ջլատելու և բաժանելու հայ աշխատաւորութիւնը և առանց ընդարձացնելու աշխատաւոր մասսաի լեղափոխական ողին»:

Այստեղ վերջանում է Քո նամակը: Իմը ուզում
եմ սկսել նոյն տեղից:

Նախ «նոր՝ դաւանանքի» մասին:

Սօցիալիստական նոր դաւանանք չունենք մենքը
ինչպէս և առաջ մենք այժմ էլ կանգնած ենք ոչ թէ
պրօլետարական, այլ աշխատաւորական հողի վրայէ
Մենք այն համոզմանն ենք, որ պրօլետարիատը, թէև
նա սօցիալիստական շարժման առաջապահն է, սօցիա-
լիզմի միակ կրողը չէ, որ նորա հետ միասին պիտի
կուի և արդէն կուռումէ աշխատաւոր գիւղացիութիւնը
որ գիւղացու և բանուորի գործակցութիւնը պիտի տեղի
ունենայ ոչ թէ մինչև մի որոշ կէտը, այլ մինչև վեր-
ջին կէտը—այսինքն սօցիալիստական հասարակա-
կարգը:

Ինչպէս և տուաջ մենք այժմ էլ ամենամեծ կարեւ-
որութիւնն ենք տալիս աշխատաւորների ձեռով և աշ-
խատաւորների համար ստեղծւած ընկերակցութիւն-
ներին, արդիւնաբերողների, արդիւնաբեր, գործադու-
լային, փոխադարձ օգնութեան, սպառողական, գնորդ,
վաճառորդ, վարկամատոյց, տեխնիական և կուլտուրա-
կան կազմակերպութիւններին և համուլտած ենք, որ այդ
կազմակերպութիւնների գաշնակցութիւնը գալիք հա-
սարակութեան սաղմն էներկայացնում արդի կապիտա-
լիստական հասարակական կարգի մէջ, որ տապալելով
կապիտալիզմը նա կառուցանում է սօցիալիզմը:

Ինչպէս և առաջ մենք այժմ էլ կանգնած ենք
դասակարգային անդուլ կուի հողի վրայ:

Ինչպէս և առաջ մենք այժմ էլ ոխերիմ հակառակորդներ ենք ամեն մի կենտրօնական պետութեան և այն կարծիքին ենք, որ ապակենարօն ռամկավարութեան մէջ միայն աշխատաւորութիւնը կարող է ծաւալել իւր ոյժերը և յաջողութեամբ առաջ տանել իր քանդիչ ու ստեղծարար գործը։ Մինչև այժմ էլ մենք կողմանակից ենք իրաւունքի բաժանման մարդկային խմբակցութիւնների վրայ։ Ֆ. Ռ. Ա. Բակին

Ուրեմն, ըսկեր, «որևէ «առօր գաւանանքի» մասին խօսք անգամ չի կարող լինել, և եթէ մեր սօցիալիզմը տարբերում է Դաշնակցական ծրագրի սօցիալիզմից և մշակականութեան, մարքսիզմի ու սօցիալ-յեղափոխականութեան այն անձարակ խառնուրդից, որը «Դաշնակցութեան Կովկասիան նախագիծ» անունն է կրում, նա չի տարբերում այն սօցիալիզմից, որը մենք, երիտասարդ գաշնակցականներս, մեր գիտակցութեան շրջանում գաւանում էինք Դաշնակցութեան մէջ:

Սօցիալիստական այս կամ այն ռեսման մէջ չէ
խնդիրը, այլ նրա մէջ, թէ որքան ենք մենք տոգոր-
ւած ալր ռւուռմով:

Այստեղ է ահա այն խոշոր տարբերութիւնը, որը
կայ մեր և սօցիալիստ-յեղափոխական կամ մարքսիստ
և համարեա թէ սօցիալիստ-յեղափոխական կամ հա-
մարեա թէ մարքսիստ հսկը մէջ:

Մենք կամենում ենք համաձայնեցնել մեր մտածողութիւնը և գործողութիւնը: Մեզ համար սօցիալիզմը մի կիրակնօրեայ զգեստ, ցուցադրելու մի իր չէայլ ամենալուրջ մի բան: Թէօրիական սօցիալիզմի գործնական շօվինիզմի կենակցութիւնը անհասկանալի է մեզ համար: Մենք չենք կարող իմանալ և չասել զգալ և չարտայայտել կեղծել, վատասիլել թէ մեզ թէ հետևող մասսան յանուն մի սատւածութեան, որը «Գանձակցութեան ամբողջութիւն» է կոչում:

ՄԵՆՔ յարել ենք անջատականներին, երբ ձեռք

հնք բերել մի քննական հայեացք Դաշնակցութեան մասին, երբ կարողացել ենք վերլուծել դաշնակցական և առհասարակ հայ իրականութիւնը:

Դիւրութեամբ չենք մշակել այդ քննական հայեացքը, որովհետեւ չափազանց դժւար է քննադատել մի բան, որը շատ ես սիրել և ես լիովին հասկանում եմ քեզ և շատ ու շատ ուրիշ ոսկէ դաշնակցականների, որոնց համար մահի չափ ծանր է այդ ինքնավերլուծումը և որոնք գերմարդկային ճիգեր են թափում, ինչ գնով էլ որ լինի, փրկելու կազմակերպութիւնը, բիւրեղացնելու, գտելու:

Ի՞նչ է Դաշնակցութիւնը:

Դաշնակցութիւնը տաճկահայ ժողովրդի ազատարար կազմակերպութիւնն է:

Դաշնակցութիւնը կովկասահայ ժողովրդի ինքնապատպան կազմակերպութիւնն է:

Նա կամեցել է և կամենում է ազատազրել քաղաքականապէս ամբողջ տաճկահայ ժողովուրդը՝ առանց դասակարգի խարութեան: Նա պաշտպանել է և պիտի պաշտպանէր ամբողջ կովկասահայ ժողովուրդը՝ նոյնպէս առանց դասակարգի խարութեան:

Դաշնակցութիւնը մի «ազգային» հիմնարկութիւնն է:

Իսկ որպիսի հիմնարկութիւն կարող է ունենալ հայ ազգը իրեր ամբողջութիւն: Այդ հիմնարկութիւնը կը լինի և է իրապէս այն, ինչ որ հայ ժողովուրդն է:

Ի՞նչ է հայ ժողովուրդը սօցիալական տեսակետով:

Հայ ազգի մի կարևոր հատւածը—Տաճկահայաստանի ժողովուրդը—դեռ չէ մտել ժողովրդական տնտեսութեան շրջանի մէջ: Թոյութիւն չունի աշխատանքի հասարակական լայն բաժանում: Ամեն մի գաւառ և ամեն մի անկիւն ապրում է իւր ուրոյն տնտեսական կեանքով, բացակայում են արտիւնաբերական խոշոր կապիտալի երկու ձևերն էլ՝ թէ մասնաւորը և թէ ըն-

կերակցականը, բացակայում է խմբական արդիւնաբերութիւնը թէ արդիւնագործական և թէ գիւղատնտեսական ասպարիզում: Ֆէօդալական կարգերի դեռ բաւական ուժեղ մնացորդների կողքին մենք տեսնում ենք զրեթէ ինքնամփոփ գիւղացիական տնտեսութիւններ, իսկ քաղաքներում մանր ու միջակ արհեստաւորութիւն և վաճառականութիւն: * Ժողովրդի բոլոր խաւերի զլիին կախւած է թիւրք կառավարութեան դամոկլեան սուրը, բոլոր խաւերն էլ տառապում են հարկերի անսակելի ծանրութեան տակ և այն պրօցէսը, որը տեղի է ունենում Տաճկահայաստանում, ոչ թէ զարգացումն է դէպի ժողովրդական տնտեսութիւնը, այլ դէպի ժողովրդական ընդհանուր չքատորութիւնը: Առաջ չեն գալիս նոր դասակարգեր և հին դասակարգերը չեն շերտաւորում, այլ բոլոր դասակարգերն էլ մնանկանում են: Ընկած է արհեստը, ընկած է վաճառականութիւնը, ընկած է գիւղատնտեսութիւնը:

Այս միջավայրից է քաղել իւր հիւթերը տաճկահայ Դաշնակցութիւնը: Տաճկահայ մանր բուրժուազիայի և գիւղացիութեան ամենից ըմբոս և ամենից վեհ ներկայացուցիչներն են կազմել Դաշնակցութեան շարքերը և այդ պատճառով տաճկահայ Դաշնակցութիւնը միշտ եղել է յեղափոխական, միշտ եղել է ուածկավարական, բայց երբեք չէ եղել չէր էլ կարող լինել և պէտք էլ չէ որ լինէր սօցիալիստական:

Կովկասահայ իրականութիւնը կարևոր կէտերի մէջ տարբերում է տաճկահայկականից: Այստեղ արդէն ֆէօդալական յարաբերութիւններից շատ քիչ բան է մնացել, դասակարգերի զանազանաւորումը աւելի առաջ է գնացել, գիւղացիական ինքնամփոփ տնտեսութիւնը համարեա թէ վերացել է և աշխատաւոր գիւղացիութիւնը հազար ու մի կախումներով և յարաբերութիւններով շաղկապւած է ժողովրդական տնտեսութեան հետ: Կապիտալը զարգանում է յաղթականորէն և տա-

Միջավայրի անձնագիր

Բ.

Անձնագիր

Հ.

Անձնագիր

կաւ առ տակաւ տոգորում է տնտեսական կեանքի բուլոր ասպարէզները: Առաջ է եկել մի պրօլետարական և կիսապրօլետարական հայ մասսայ: Աւկայն այստեղ հայ աշխատաւոր գիւղացիութիւնը և պրօլետարիատը դեռ չեն կարողացել մշակել իրենց ուրոյն աշխատաւորական մտածողութիւնը և գործողութիւնը և գտնւում են տակաւին յաղթական հայ բուրժուազիայի մտաւոր դեկավարութեան տակ:

Անգիտակից և անգիտակցութեան մէջ պահնած աշխատաւորի և գիտակից բուրժուազիայի կազմակերպութիւնն է կովկասեան Դաշնակցութիւնը:

Կովկասահայ խօցիալական կեանքի մէջ կատարւած և այժմ էլ արագութեամբ կատարւող յեղացրջումը հասկանալի է դարձնում այն շփոթը, այն մըտաւորական քաօսը, այն իրար հակադիր և խաչաւորող հոսանքները, որոնք գոյութիւն ունեն Դաշնակցութեան դեկավար շրջաններում:

Ամերիկայի «Հայրենիքը», Դաշնակցութեան աւանդութիւններին և մտածողութեան այդ միակ հուատարիմ թերթը, «Պահարմենիզմ» է քարողում, Բագրի և Գանձակի Դաշնակցութեան թուոցիկները՝ սօցիալիզմ: Մարտիկ ոյժերը դասակարգային համերաշխութիւն և ազգային միութիւն են պահանջում, «Ապառաժի» ընկերները խրախուսում են Դարաբագի աշխատաւոր գիւղացիների դասակարգային կոիւը հայ մէլիքների և բէզերի դէմ: Մի կենտրօնական կօմիաէ ամենից բարեացակամ յարաբերութիւններն ունի տեղական բարձր բուրժուազիայի հետ և շատ ցաւում է, երբ հայ կապիտալիստները ենթարկւում են գործադուլային դժբախտութեան, իսկ նոյն կենտրօնականի շրջիկը ամենայն եռանդով գործադուլներ է կազմակերպում այդ կապիտալիստների դէմ:

Նա, որը սօցիալիզմը ատում է, նա որը անտարբեր է դէպի սօցիալիզմը և նա, որը սօցիալիզմը կա-

րող է սիրել, նստած են իրար կողքի և կազմում են այն, ինչ որ կոչւում է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն:

Հակասութիւններ, հակասութիւններ, հակասութիւններ:

«Այս, զա այդպէս է», պիտի առարկես Դու: «Բայց միթէ դու չես նկատում, որ Դաշնակցութիւնը դտուում է: Միթէ դու չգիտե՞ս, որ խոշոր բուրժուազիան արդէն թողել է մեզ: Միթէ քեզ յայտնի չէ, որ հակասոցիալիստ Միհրանական հոսանքը անջատւել է մեզանից: Միթէ քեզ համար պարզ չէ, որ Դաշնակցութեան երիգասարտ տարբերը աւելի ու աւելի են տոգորւում միշտագային յեղափոխական սօցիալիզմի գաղափարով և Դաշնակցութիւնը, իբրև ամբողջութիւն, սկսել է բիւրեղանալ սօցիալիստական իմաստով»:

Անշուշտ, տեղի ունի Դաշնակցութեան մէջ բիւրեղացում: Սակայն այդ բիւրեղացումը կատարւում է ոչ թէ մի կէտի, այլ երկու հակադիր կէտերի շուրջը: Դրանցից մէկը կոչւում է աշխատաւորների միջազգային սօցիալիզմ, միւսը՝ «ազգային գաղափար» և Տաճկահայ ժողովրդի քաղաքական ազատագրում: Այսպէս որ աւելի յարմար կը լինէր բիւրեղացման փոխարէն գործ ածել—ներիր ոճի այս բարբարոսութիւնը—բևեռացում:

Տաճկահայ ժողովրդի և կովկասի հայութեան մի մեծ մասի համար սօցիալիզմը մի անհրաժեշտութիւն, մի իրական պահանջ չէ ներկայացնում, մինչդեռ կովկասահայ պրօլետարիատի և մասսամբ աշխատաւոր գիւղացիութեան համար սօցիալիստական շարժումը և կազմակերպութիւնը մի անխուսափելի պահանջ է և իրականութեան հրամայողական թելազրանք: Հայութեան այդ երկու տարբեր հատւածները մի կուսակցութեան մէջ մնալ չեն կարող:

Արդէն լսում եմ քո առարկութիւնը: «Զէ որ

դուք սօցիալ-դէմօկրատներ չէք, չէ որ դուք կանգնած էք աշխատաւորական և ոչ զուտ պրօլետարական տեսակէտի վրայ: Արդեօք աշխարհիս վրայ գոյութիւն ունի աւելի չարատանջ, աւելի կեղեքած ու աղքատ աշխատաւոր ժողովուրդ, քան տաճկահայ գիւղացիութիւնը: Դուք պարտաւոր էք սօցիալիստորէն կազմակերպելու նրանց»:

Խեղճ աշխատաւոր ժողովուրդ!...

Թերեւս ոչ մի գաղափար չէ շահագործում այնքան Դաշնակցութեան մէջ, որքան այդ գաղափարը:

Աշխատաւոր է, անպայման, ինքնափոփ տնատնաւութեան շրջանի գիւղացիական ընտանիքը, որը առանց շահագործումի արդիւնաբերում է և սպառում միայն այն, ինչ որ ինքն է արդիւնաբերել: Աշխատաւոր է հիւսիսային հտալիայի կամ Դանիայի մանր գիւղացին, որը հազար ու մի յարաբերութիւններ, կախումներ և կապեր ունի դրսի աշխարհի հետ, որը ժողովրդական տնտեսութեան հսկայ մեքենայի բիւրաւոր անիւներից մէկն է ներկայացնում, որը մշակում է հում նիւթերը ընկերակցաբար, որի մասնաւոր սեփականութիւնը մի զանցառական քանակ է ընկերակցական սեփականութեան դիմաց, որը մի որոշ տնտեսական կազմակերպութեան մէջ միայն կարող է գոյութիւն ունենալ: Աշխատաւոր է անբանւոր և իւր սեփական ընտանիքի հետ արդիւնաբերող անկախ արհեստաւորը: Աշխատաւոր է, դաշնակցական հասկացողութեամբ, և մանրավաճառը, որի եկամուտը շատ յաճախ ցածր է պրօլետարական ամենացածր եկամուտից: Աշխատաւոր է սեփականութիւնից զուրկ և միայն զոյտ ու մկանուո ձեռների տէր պրօլետարը:

Սակայն որպիսի տարրերութիւն այդ աշխատաւորների մէջ!

Մինչդեռ կապիտալիստական երկիրների աշխատաւոր գիւղացիները կազմակերպել են ընկերակցա-

կան հիմնարկութիւնների մի ճոխ ցանց, ստեղծել են խմբական կապիտալ խմբական արդիւնաբերութեան միջոցներ, իւրացրել են և օր օրի վրայ աւելի իւրացնում են արդիւնաբերական ամենաբարձր տեխնիկան, մինչդեռ նրանց մասնաւոր սեփականութիւնը, իբր իրաւունքների մի որոշ գումար՝ օր օրի վրայ կրծաւում է և տեղի է տալիս հանրային սեփականութեան, մինչդեռ հտալիայի, Դանիայի և Ֆրանսիայի մանր գիւղացիութիւնը գիտակցաբար թէ անգիտակցաբար զարգանում է գէպի սօցիալիզմը — ինքնամփոփ տնտեսութեան շրջանինոյնպէս աշխատաւոր գիւղացիները և ոչ մի արամազրութիւն չեն ցոյց տալիս յարելու նորագոյն լսօցիալիստական շարժման: Մինչդեռ պրօլետար աշխատաւորները խիտ շարքերով համախմբում են սօցիալիստական դրօշի շաւըը, աշխատաւոր արհեստաւորները և մանրավաճառները պատրաստ են ամեն մի գնով պաշտպանելու իրենց մասնաւոր սեփականութիւնը և տարուրերուում են շարունակաբար բէակցիայից գէպի յեղափոխութիւնը և յեղափոխութիւնից գէպի բէակցիան:

Սօցիալիստական շարժումը բղխում է իրական պայմաններից:

Այնտեղ, ուր բացակայում է ժողովրդական ալնաւեսութիւնը, այնտեղ ուր չը կայ լայն չափերով աշխատանքի հասարակական բաժանում, այնտեղ ուր բացակայում է ընկերակից և գործակից աշխատանքի անհրաժեշտութիւնը, ուր արդիւնաբերութիւնը խմբական բնաւորութիւն չի կրում, ուր բոլոր անտեսական գասերը զարգանալու և շերտաւորելու փոխարէն սընանկանում են, ուր բացակայում են հաղորդակցութեան միջոցները, ուր ոտնակոխ են արտած մարդու և քաղաքացու ամենատարրական իրաւունքները, ուր չը կայ որևէ է իրաւակարգ, ուր մարդիկ ալլրում են ու մտածում հազար ու մի կողպերի տակ առանց դրսի ժողովրդների ուժեղ ազդեցութիւնը կրելու, ուր դոյտութիւն

շունի մամուլ և գրականութիւն, ուր չի ստեղծւել գեռ մի սօցիալիստական ինտելիգենցիա, այդպիսի մի տեղ հասկանալի է, անհրաժեշտ է և անխուսափելի է քաղաքական ազատագրութեան գործը, իսկ սօցիալիստական շարժումը հասկանալի չէ, անհրաժեշտ չէ և անխուսափելի չէ:

Այս չափով, ինչ չափով որ մենք ծանօթ ենք Տաճկահայ իրականութեան, այդ իրականութիւնը գուրկ է մի սօցիալիստական շարժման սուբստանցիել և իդէական բոլոր կարևոր նախապայմաններից: Առայժմ գոնէ և մօտաւոր ապագայում:

Ինչ վերաբերում է տաճկահայ ժողովրդի ծայրայեղ թշւառութեան, պիտի ասեմ Քեզ, որ թշւառութիւնը ինքն ըստ ինքեան չի կարող մղել որևէ դասակարգ գէպի սօցիալիզմը: Աւելի քան այդ: Ծայրայեղ թշւառութիւնը մի մեծ արգելք է սօցիալիզմի համար: Որովհետև սօցիալիզմը պէտք է գիտակցել իսկ ծայրայեղ թշւառութեան անրաժման ընկեր—ծայրայեղ տգիտութիւնը անհնար է դարձնում ամեն մի գիտակցութիւն: Ծայրայեղ թշւառութիւնը դաստիարակում է մարդու մէջ հլու ու անրողոք հպատակութիւն և վարժեցնում է նրան յարմարւելու մի աւելի ծայրայեղ գրութեան:

Ով որևէ ազատութիւն չի տեսել, նա չէ կարող ցանկանալ մի աւելի մեծ ազատութիւն, և ով որևէ վայելք չի ունեցել, նա չէ կարող ձգտել մի աւելի մեծ վայելքի:

Ծայրայեղ թշւառութիւնը չէ, յամենայն գէպս, նորագոյն սօցիալիստական շարժման մղիչ ոյժը:

Հրաժարւել պրօլետարական սօցիալիզմի սօցիալ-դեմոկրատիական կօնցեպցիայից չի նշանակում դեռ կորցնել ոտերի տակից բէալ աշխարհը, ինկատի չառնել իրական պայմանները և տրւել «աղքատ մարդ-

կանց» սօցիալիզմի մանր բուրժուական ճղճիմ հոսանքին:

Այս ամենի դիմաց մեզ սովորաբար առարկում են և Դու էլ անշուշտ կառարկէս այսպէս: «Դուք, երիտասարդ դաշնակցականներդ, դեռ մի երկու տարի առաջ սօցիալիստներ չէիք, այլ սոսկ ուանկավարականներ, իսկ այժմ ոչ չէ կարող կասկածի ենթարկել ներ իսկ սօցիալիզմի անկեղծութիւնը: Ինչու չէք կարծում որ նոյն զարգացման ընդունակ են և այն դաշնակցականները—ոռուսական թէ տաճկահայ—որոնք դեռ զորիկ են սօցիալիստական հայեցողութիւնից և մինչև անգամ հակառակորդներ են սօցիալիզմի: Հարկաւոր է միայն կամողել նրանց, բացատրել սօցիալիզմի գիտականութիւնը, արդարացիութիւնը և կարենութիւնը և նըրանք անպայման կը յարեն այդ վարդապետութեան: Վերջապէս, միթէ քիչ է այն տաճկահայ և ոռուսական կերպների թիւը, որոնք կողմնակից են սօցիալիստական կազմակերպութեան և կուի Անդրկովկասում:

Սնտարակոյս, պրօպագանդը ահազին ազգակ է և մենք չենք որ պիտի ժխտենք նրա նշանակութիւնը: Եթէ չը կայ պրօպագանդը, եթէ չը կայ սօցիալիստական կան ուսումնը, գիտակից սօցիալիստական շարժում չի կարող գոյութիւն ունենալ: Բայց միւս կողմից, եթէ չը կան մի շարք օրյեկտիվ պայմաններ, պրօպագանդը աղեցցութիւն ունենալ չի կարող:

Մենք աշխատեցինք ցոյց տալ այդ պայմանների բացակայութիւնը Տաճկահայաստանում: Իսկ եթէ Դու պնդում ես, որ մեր տաճկահայ ընկերներից շատերը ընդունում են սօցիալիզմը, այն ժամանակ թոյլ տուր ընկատելու հետեւեալը: Այդ ընկերները և ոռուսական կերպների մեծ մասը, յանուն Դաշնակցութեան ամբողջութեան և յարատեսութեան, պատրաստ են ամեն ինչ ընդունելու: Նրանք կընդունեն և կաղետիզմ, և մարքընդունելու: Նրանք կընդունեն և սինդիկալիզմ, և սիզմ, և սօցիալ-ընկոլուցիւցիօնիզմ, և սինդիկալիզմ, և ամեն մի ուրիշ «իզմ», որովհետև նրանք այդ «իզմե-

րից» և ոչ մէկին լուրջ նշանակութիւն չեն տալիս: «Եղէք ինչ ուզում էք, պարապէք ինչով կամենում էք, միայն մի քանդէք Դաշնակցութիւնը և շարունակեցէք օժանդակել տաճկահայ գործին»: Ահա նրանց լոգունքը:

Մենք չենք հաւատում—բացառութիւնների մասին չէ խօսքս—այդ ընկերների սօցիալիզմին, որովհետեւ գիտենք, որ դաշնակցականների—տաճկահայ թէ ուռւահայ—ճնշող մեծամասնութիւնը իր հոգու խորքում հակալում է աշխատաւոր մարդու դասակարգային դատը և սօցիալիզմը և սիրում է միայն մի բան՝ տաճկահայ ժողովրդի քաղաքական ազատազրումը:

Դաշնակցութեան դրօշին հաւատարիմ տաճկահայերի զանազանութիւնը միհրանականներից պէտք է փնտրել ոչ թէ տարբէր հասարակահայեցողութեան, այլ տարբէր բարոյահայեցողութեան մէջ: Դաշնակցութեան յարող տաճկահայերը ուզում են ապրել և մեռնել տաճկահայ ժողովրդի ազատութեան գաղափարի համար, Դաշնակցութիւնից անջատող միհրանականները ուզում են գլխաւորապէս շահագործել այդ գաղափարը:

Հիմա խնդրում եմ, սիրելի ընկեր, աչքի անցնել բերած դատողութիւնները և ասել, կարող ենք արդեօք չանչատել, հնարաւոր է և անհրաժեշտ է արդեօք Դաշնակցութեան ամբողջութիւնը:

Դաշնակցական ընկերների մտածողութիւնը տակաւ առ տակաւ ենթարկում է զանազանաւորման և այժմ արդէն բաւականաչափ զանզանաւորւել է: Ստեղծւել են մտքի և ձգտումի երկու բևեռներ: Մէկը սօցիալիստական, միւսը ազգայնական: Տարբերութիւնը դաշնակցականի և «դաշնակցականի» մէջ աւելի խոշոր է, քան երկու տարբէր սօցիալիստական կամ որևէ ուրիշ քաղաքական բանակների պատկանող անհատների մէջ: Դաշնակցութիւնը երբէք չի եղել համախոհների մի կազմակերպութիւն, այժմ նա դադարել

է և համազգացների կազմակերպութիւն լինելուց:

Տաճկահայ դատը, իրը մի ամբողջ ժողովրդի քաղաքական դատ, իր էյութեամբ տարբերում է կովկասահայ աշխատաւորի դասակարգային դատից:

Տաճկահայ իրականութիւնը չէ ստեղծել գեռ մի սօցիալիստական կուսակցութեան անհրաժեշտութիւնը, այնտեղ բացակայում են մի սօցիալիստական շարժման բոլոր օրյեկտիվ նախապայմանները, իսկ Անդրկովկասում այդ նախապայմանների մեծ մասը իրականացած է արդէն և մինչդեռ սօցիալիզմը Տաճկահայաստանում մի բռնագրուիկ ուսուցիչ է, մեզ մօտ նա մի անհրաժեշտութիւն է:

Այդ ամենը գիտակցելուց յետոյ ի՞նչ է պարտաւոր անելու սօցիալիստ դաշնակցականը: Եթէ նա չէ կամենում հաշտեցնել անհաշտելին, եթէ նա չէ կամենում ինքնախարէութեամբ և օտարախարէութեամբ պարապէլ, եթէ նա չէ կամենում անգործութեան մատնել իրեն, եթէ նա ձեռք չէ բերել միաժամանակ երկու աթոռի վրայ նստելու ընդունակութիւնը—նա պիտի անջատւի Դաշնակցութիւնից:

Նա պիտի դառնայ երիտասարդ դաշնակցական: «Ի՞նչու անջատւել», կասես Դու, «քանի որ կարելի է այդ երկու դատերի մէջ թոյլ կապեր միայն պահպանել և զրանցից ամեն մէկին՝ լիակատար ներքին անկախութիւն տալ»:

Թոյլ կապերը այնուամենայնիւ կապեր են: Երբ խօսում են զրանց մասին, հասկանում են մի կողմից Դաշնակցութեան ընդհանուր ժողովը, որը կուսակցութեան ընդհանուր սկզբունքները պիտի մշակի, միւս կողմից պարտադիր օժանդակութիւնը տաճկահայ գործին:

Ի՞նչ է ներկայացնում իրենից Դաշնակցութեան ընդհանուր ժողովը:

Հնարական վատ սիստեմի հայոց պարլամենտ:

Այդ պարլամենտը, որի կազմը նոյնքան խայտածամուկ է և այլատարը, որքան խայտածամուկ և այլատարը է հայ իրականութիւնը և մտածողութիւնը, բոլոր խնդիրները քննութեան պիտի ենթարկի մի պրիզմայի միջոցով։ Դաշնակցութեան ամբողջութեան և յարատե գոյութեան պրիզմայի միջոցով։

Եթէ Դաշնակցութեան գոյութեան և ամբողջութեան համար անհրաժեշտ է ունենալ սօցիալիստական ծրագիր, նա կը տայ այդ ծրագիրը, իսկ եթէ անհրաժեշտ է մի ուրիշ բան, նա կը տայ այդ ուրիշ բանը։ Եթէ Դաշնակցութեան գոյութեան և ամբողջութեան համար հարկաւոր է թէ ազգասիրութիւն և թէ սօցիալիզմ, այն ժամանակ նրա մշակած ծրագիրը կը բռվանդակէ մի քիչ սօցիալիզմ, մի քիչ էլ ազգային գաղափար, մի քիչ ազգայնականութիւն, մի քիչ էլ միջազգայնականութիւն, մի խօսքով՝ ամեն բանից քիչ։

Այդ ժողովը պատրաստ է ամեն ինչ տալու և ամեն ինչ վերցնելու, ամենին զիջելու և ամենին սպառնալու, միայն թէ Դաշնակցութիւնը շարունակի գոյութիւն ունենալ Պետերբուրգից մինչև Տիգրանակերտ և Ղարաբաղից մինչև Բոստոն։

Մեր վերաբերումը գէպի ընդհանուր ժողովի ծրագիրը, մինչև անգամ սօցիալիստական ծրագիրը, չափաղանց որոշ է։

Այդ ծրագիրը որևէ արժէք չը պիտի ունենայ մեղ համար։ Որովհետեւ սօցիալիստական կուսակցութիւնը միայն կարող է ունենալ սօցիալիստական ծրագիր, որովհետեւ սօցիալիստները միայն բարոյական իրաւունք ունեն սօցիալիստական ծրագիր մշակելու, որովհետեւ սօցիալիստական ծրագիրը պիտի տրւի առանց մասնաց ետին մտքի և ոչ թէ ի փառա այս կամ այն հիմնարկութեան։

Ազգային ժաղավարի որոշումները սօցիալիստաների համար պարտագիր մինել չեն կարող։ Այժմ անցնում եմ մի վերին աստիճանի փափուկ խնդրի։

Պիտի մենք օժանդակենք տաճկահայերի ազատագրութեան, թէ ոչ և ինչպէս պիտի օժանդակենք։ Ամեն մի մարդ, մանաւանդ ամեն մի հայ մարդ, ամեն մի սօցիալիստ և մանաւանդ ամեն մի հայ աօցիալիստ պարտաւորւած է բարոյապէս օգնելու տաճկահայերի քաղաքական ազատագրութեան գործին, օգնելու կեանքով, զէնքով և զրամով։

Այդ մասին երկու կարծիք գոյութիւն ունենալ չի կարող։

«Եթէ օժանդակելու այդ պատրաստակամութիւնը մի գիտաւորեալ կեղծաւորութիւն, մի տաքտիքական խորամանկութիւն չէ ձեր կողմից, եթէ տաճկահայ ժողովրդի տառապանքները իսկապէս այդքան մօտ են ձեր սրտին, ապա ինչո՞ւ չէք կամենում որ օժանդակական կութիւնը մինի պարագիր»։ Այդպէս կը հարցնեմ Դուք Պարտագիր, այսինքն ծրագրային։ Չի կարող մենել Անդրկովկասում գործող մի սօցիալիստական կաղմակերպութեան օժանդակաթիւնը տաճկահայերի աշխատագրական գործին հետևեալ պատճառներով։

Նախ, որովհետեւ այդպիսավ կարող է տռամել թէ սօցիալիստական կազմակերպութիւնը և թէ տաճկահայ քաղաքական կռւսակցութիւնը։

Սօցիալիստական կազմակերպութիւնը պիտի հըրածարեի այդ գէպում այն աշխատաւորական տաքտից և խմբակցութիւններից, որոնք ընդունում են սօցիալիստական ծրագիրը, իսկ տաճկահայերին օգնելու ծրագրային պարտականութիւնը չեն ընդունում։

Ապա, եթէ տաճկահայ գործը գտնվի, մի սօցիալիստական կազմակերպութեան գէկավարութեան տակ, կամ եթէ նա առաջ տարւի մի այդպիսի կազմակեր-

35-60X



պութեան պարտադիր աջակցութեամբ, չ աճկահայ գործը պիտի զրկվի այն մասնակցութիւնից և օժանդակութիւնից, որը կարող են ցոյց տալ և երկու տասնամեակի ընթացքում ցոյց են տել հայ ժողովրդի ոչ սօցիալիստական տարրերը:

Միւս կողմից, եթէ այդ տարրերի աջակցութիւնը կատարւի մի սօցիալիստական կազմակերպութեան միջոցով, պիտի ընդունիւ այդպիսով և նրանց մասնակցութիւնը և ազգեցութիւնը այդ սօցիալիստական կազմակերպութեան մէջ, պիտի թոյլ տրւի, որ յեղափոխական մանր բուրժուան կամ ազգասէք խոշոր բուրժուան և հակասօցիալիստը շարունակեն մթացնել աշխատաւոր մարդու դասակարգային գիտակցութիւնը: Այսինքն կովկասեան Դաշնակցութիւնը պիտի կրկնիւի:

Մի բան որից մենք ամենից շատ ենք խուսափում: Ապա կարենոր եմ համարում այստեղ առանձնապէս շեշտելու, որ մենք ամեն մի տաճկահայ շարժման, ամեն մի տաճկահայ յեղափոխական կազմակերպութեան և ամեն մի յեղափոխական ձեռնարկի չպիտի օժանդակենք: Մենք կօժանդակենք միայն այն կազմակերպութիւններին, որոնք բաժանում են մեր հայեացքը տաճկահայ խնդրի վերաբերմամբ և որոնց գործելակերպը մենք կը համարենք նպատակարամար:

Մեր հայեացքը տաճկահայ խնդրի մասին հետեւան է:

Տաճկահայ խնդրը տաճկական մեծ խնդրի բաղկացուցիչ մասն է միայն: Խենթութիւն է կարծել, որ հայ ժողովուրդը, որը մինչև անգամ իր հայրենիքում փոքրամասնութիւն է կազմում, պիտի կարողանայ սեփական ոյժերով ազատազրւել: Խենթութիւն է կարծել, որ եւրոպական դիմումաները պիտի կամենան և տաճկահայ դատի երկու զոյգ եւրոպական բարեկամները պիտի կարողանան նպաստել յատկապէս տաճկահայերի ազատութեան գործին: Հայ ժողո-

վուրդը պիտի ազատւի տաճկելի հետ միասին, կամ բնաւ չըպիտի ազատւի: Տաճկահայ յեղափոխութիւնը, այդ պատճառով, տաճկական յեղափոխութեան բաղկացուցիչ և ենթակայ երևոյթներից մէկը պիտի կազմի և չի կարող ունենալ որեւէ սեպարատիստական նպատակ:

Հայդուկային արշաւանքների, անպատրաստ աշպատամութիւնների, գիպլօմատիական ակնկալութիւնների և պարլամենտական հարցապնդումների քաղաքականութիւնը պէտք է թողնել մի կողմը և ձեռնարկել անմիջապէս միջազգային յեղափոխութեան կազմակերպութեան թիւրքիայում:

Գուցէ Դաշնակցութիւնը, երկու տասնամեակի շափազանց դասն փորձերից յետոյ, կարողանայ կանգնել այս հայեցակէտի վրայ, այն ժամանակ մեր համականքն ու սէրը, մեր օժանդակութիւնը տաճկահայ ժողովրդի ազատութեան համար մարտնչող Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պիտի պատկանէ:

Երբ հատնում են բոլոը տրամաբանական արգումենտները, մեր հակառակորդ—ընկեր դաշնակցականները սկսում են մեզ նախատել: «Ուրեմն դուք ուզում էք լւալ ձեր ձեռները և հեռու կենալ տաճկահայ ժողովրդը, դուք ուզում էք մոռանալ, որ կովկասահայ ժողովուրդը արիւնով կնքւած պարտականութիւններ ունէ տաճկահայերի վերաբերմամբ: Դուք ուզում էք լքանել տաճկահայ ժողովուրդը»:

Նախ, ոչ ոք չի ասել, թէ պէտք է ձեռները լւալ տաճկահայ դատից, ոչ ոք չի ասել, թէ պէտք է անտարբեր մնալ մի արիւնակից ժողովրդի ահռելի տառապանքների դիմաց, ոչ ոք չի ասել, որ ոռւսահայ ժողովուրդը չպիտի նպաստի այն մեծ յեղափոխութեան, որը հարաւոր պիտի դարձնէ ամեն մի սօցիալիստական շարժում և առասարակ ամեն մի առաջխաղաց զարգացում Առաջաւոր Ասիայում:

Ով պնդումէ այդ, նաև մութ դիտաւորութիւն կամ բութ մտածողութիւն ունի: Մենք պահանջում ենք միայն երկու տարբեր գործերի համար—մի ամրող ժողովրդի քաղաքական սովատագրութիւնը և մի գասակարգի սօցիալիստական շարժումը—երկու անկախ կազմակերպութիւններ: Վերա ջապէս տաճկահայ դատը չէ միայն, որ ստիպում է մեզ անջտուել Դաշնակցութիւնից: Մենք կանջառուենք այդ կաղմակերպութիւնից և այն ժամանակ, եթէ տաճ կահայ դատը բնաւ գոյութիւն չունենար և Դաշնակցութեան միակ ասպարէզը լինէր ոռուստկան հայութիւնը:

Մեր սպատակը չէ կովկասահային բաժանել տաճկահայից, այլ աշխատառորի սօցիալիստական շարժումը և կաղմակերպութիւնը բաժանել մի ամրող աղբութեան միջդասակարգային, բայց այնուամենայնիւ բուժութագրի զեկափարութեան և հոգանաւորութեան տակ գտնուող շարժումից և կաղմակերպութիւնից:

Գալով «լքման», «յուսահատութեան» և նման զգացումային արգումենտներին, պիտի առեմ թեզ, որ այդ լքումը և յուսահատութիւնը պիտի առաջ գայ ոչ թէ տաճկահայ յեղափոխականների մէջ, որոնց թիւը հազար է ու հազար, այլ նրանց մէջ միայն, որոնք դու դում են Թաշնակցութեան ամրող ջութեան համար, ու բոնց համար դաշնակցութիւնը առելի է քան հայ ժու դովուրզը և նրա ազատութիւնը:

Երբ տաճկահայ յեղափոխութիւնը կնպատէի ոռուսայ իքաւելիքնցիայի ինսամատարութիւնից, երբ յեղափոխական գործը կը զննէի այնպիսի մարդկանց ձեռին, որոնք հրահանսկներ տաղուց բացի պատրաստ են և մենմել ժողովրդի ազատութեան համար, երբ տաճկահայ յեղափոխականները ձեռք կը մենմեն Տաճկառա մասնի մասցած ժողովրդների, յեղափոխականներին և կը դիմեն մի ընդհանուր նորադարձի, այն է ոռութանուագի առաջանական ամրութեան մասնակի, այն է ոռութանու-

կան ուժիմի տապալման, երբ տաճկահայ մասսան կը հրաժարէի ուսահայերի որոշիչ աջակցութեան և դիպլոմատիական հրաշքների խորապէս վնասակար պատրանքներից, այն ժամանակ համոզած ենք մենք, որ այդ մասսան կը կարողանայ ցոյց տալ մի այնպիսի յեղափոխական կորուլ և ոյժ, կը կարողանայ արտապլել զեկավար և մարտիկ յեղափոխականների մի այնպիսի փայտուն շարան, ստեղծել մի այնպիսի կազմակերպութիւն, որի նմանը նա երբէք չի ունեցել:

Նոյն համոզումն ունեն և տաճկահայ վիտակից ընկերներից մի քանիսը, որոնք մեզ հետ միասին երկու դատերի անջատումն են պահանջում:

Ով խօսում է «քման և յուսահատութեան» մասին, նա զրագրում է տաճկահայերին և այժմեանից արդէն, առանց զիտակցելու, մահւան դատավճիռ է կարգում տաճկահայ շարժման:

Այդպիսիները կանգնած են տրամաբանական մի ծանր երկնտրանքի առջև Եթէ մի քանի տասնեակ ուսահայ գործիչների, մի քանի հարիւր հրացանի և մի քանի հազար բուրբու բացակայութեան պատճառով տաճկահայերը պիտի յուսահատուին և յեղափոխական գործը պիտի կանգառնի կամ դանդաղի, կը նշանակէ, որ ամրող տաճկահայ յեղափոխական շարժումը եղել է մի արւեստական շարժում, իսկ եթէ ոչ, եթէ Տաճկառանի մէջ գայ մի յեղափոխական կամ յեղափոխութեան տրամադրի հայ ժողովուրդ, այն ժողովուրդ, իր ոռութի վրայ տանեւ և կարիք չի պատագի առաջանական կազմակերպութեան:

Թոյլ տուր այժմ անցնելու քո վերջին հարցին: Անջատում քարոզելով և անջատումը իրականացնելով՝ գերօրալիգացի չէնք հնթարկիլ արդեօք հայ աշխատաւոր մասսան, չենք կորցնիլ արդեօք նրա համակը բանքը, չենք Աստիւ արդեօք նրա յեղափոխական ողին:

Մասսայի այդ անպայման պաշտամունքը մեզ անհասկանալի է, որովհետև մեր կարծիքով՝ մարտնչող սօցիալիզմի համար այն մասսան միայն արժէք ունի, որը գիտակից է, որը յեղափոխական է և որը կազմակերպւած է:

Կովկասեան Դաշնակցութեան մասսան իր հսկայական և գորշ մեծամասնութեան մէջ ոչ գիտակից է, ոչ յեղափոխական է և ոչ էլ կազմակերպւած: Վկայեն սորան դաշնակցական մասսայի ձեռով կատարւած բարբարոսութիւնները թիւրքերի և հայերի վրայ, վրկային այդ մասսայից եւած հազարաւոր միհրանականները, անիշխանաջինջները, հարուստ աղաների գինակիր նոքարները, վկայ է այդ մասսայի թիւրքատեցութիւնը և նրա անասելի սարսափը յեղափոխութիւնից:

Որեէ յեղափոխական գործողութեան համար այդ մասսան, չը նայած նրա մէջ ամբարւած անհատական քաջութեան, գրական արժէք չունի և եթէ ինդրին նայելու լինենք սօցիալիստի և յեղափոխականի, բայց ոչ «ազգասէրի» տեսակէտից, դաշնակցական յեղափոխական մասսա գոյութիւն չունի, ուրեմն չը կայ և այն օրյեկտը, որի ջլատումը և գեմօրալիզացիան այնքան հոգսեր է պատճառում մեր հներին:

Դաշնակցութեան մասսան անգիտակից հայ ժողովուրդն է իր բոլոր առաւելութիւններով և թերութիւններով և ով մօտենում է նրան սօցիալիստական խօսքով ու գործով, նա բարոյականացնում է և ոչ թէ բարոյազրկում, նա կազմակերպում է և ոչ թէ կազմալուծում, նա յեղափոխականացնում է և ոչ թէ թուլացնում այդ մասսայի յեղափոխական ոգին:

Եւ պիտի ասեմ Քեզ, որ մենք խորապէս դարշում ենք և ուշի ուշով պիտի խուսափենք այն գգւելի որսից, որը Դաշնակցութիւնը և սօցիալ-զեմօլրատիան ձեռնարկել են հայ մասսայի վերաբերմամբ: Մենք չը


պիտի ձգտենք խարելու և ապշեցնելու դրսի աշխարհը հազարաւոր ոչնչութիւնների մնամէջ քանակով, այլ պիտի աշխատենք միայն սօցիալիստական միտքը մըտցնելու մասսայի մէջ և պիտի լինենք այդ մասսայից ելած գիտակիցների մարտնչող կազմակերպութիւնը:

Նամակս վերջացնում եմ:

Ես գրել եմ սիրելով: Եթէ իմ մտածողութեամբ վիրաւորել եմ Քո զգացումները, ներիը ինձ: Դա դիտմամբ չէ եղել:

Ընդունիր ընկերական ջերմ բարեներս

Քո Ռիխարդ:



պատճառ կողք ուժարեցաւ և ոչդաշտ գոհմորի մայիս
լու խոյսուաց Անոնք զգման զգման վեհացու դրասդորան ու
բացի զգուի մատուածայածքու մասին զըմասդու մայիս
բայսուան բաւ զըման գոհմու և նև գյանուն ուժաւ
ուժաւ Արդութիւնքու բայսուան հյուծեցաւուր ծայր
ան եւուցաւզմի սիստեմ
զիսմետրանու և ԱՄՆ պայման և յայր ուն
ունք ուն շան զգում զըմասդուր ուն և ընսույնի
ունք և զիսմ
սիսմաց նոյն մատուածայ զիսմորի¹
պատճառ ան

2013

«Ազգային գրադարան»



7619

NL0040957

